

ՏԱՍՆ ԵՒ ԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Թարգմանական գրականութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Բամբակի առեւտուրը Երևանում. Նա-
մակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Անգլիական համայնքների ժողովը և
հայերը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵ-
ԻԱԿԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.—ԲՈՎԱՆԻ-
ԱԿԱՆ. Պարիզից:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I

Մենք թարգմանական գրականութիւն
չունենք. մենք ունենք օտար գրականու-
թիւններից թարգմանած բազմաթիւ գրե-
քեր, սկսած ամենահայտնի հեղի-
նակներից մինչև «կոպեկանոց» գրքերը—
բայց թարգմանական գրականութիւն
թիւնը.—այդ բառի լայն նշանակութեամբ,
մենք չունենք:

Յիսուս տարի կը լինի արդէն, որ մեր
նոր աշխարհագրական լեզուով սկսել են
թարգմանել օտար գրականութեան գլխա-
վան ստեղծագործութիւնները, սակայն չը
նայած այդքան երկար ժամանակամիջոցին,
չը նայած որ ամբողջ կէս դարում կարելի
էր թարգմանական մի ամբողջ շէջ
ստեղծել հայոց գրականութեան մէջ—
բայց և այնպէս այսօր,—որքան էլ տխու-
րի լինի այդ բանը,—այնու ամենայնիւ
ստիպւած ենք խոստովանել, որ շատ քիչ
բան է կատարւած այդ ասպարիզում:

Մենք ունենք հին կլասիկների՝ Հովե-
րոսի, Վերգիլի, Միլտոնի և զրանց
նման շատ գրողների գրաւոր թարգ-
մանութիւնները, որոնք կատարւած են
գլխաւորապէս Միլիթարեանների ձեռքով:
Եւ պէտք է խոստովանւած, որ այդ բանում
Միլիթարեան վարդապետները աւելի հե-

տեղաբար վարվեցին. նրանք ձգտեցին
թարգմանել նշանաւոր կլասիկներին մեր
կլասիկ լեզուով, նրանք ողորդեցին օտար
կլասիկների ստեղծագործութիւնները հա-
յոց գրաբար լեզուով թարգմանելու մշտ-
նով, ցանկանալով հայկական գրաւորանի
մէջ ունենալ յունական, հռոմէական և
նոյն իսկ ֆրանսիական և անգլիական կը-
լասիկների թարգմանութիւնները.—և իր-
անց այդ նպատակին զիմեցին զովիւր ե-
ռանդով և հաստատականութեամբ:

Դրանից յետոյ, երբ հայոց նոր, աշխար-
հագրական ջախջախեց գրաբարի տի-
րապետութիւնը, և դարձաւ հայկական
մուտքը գործունէութեան արտայայտիչ,
այդ լեզուով սկսեցին լոյս տեսնել զանա-
զան գրքեր Պոլսում, Թիֆլիսում, Մոսկվա-
յում, Պետերբուրգում, և ուրիշ տեղերում,
թարգմանված զանազան մարդկանց ձեռ-
քով:

Սակայն մի ընդհանուր ակնարկ դրելով
այդ թարգմանական գրականութեան վրա,
շատ հեշտութեամբ կարելի է համոզուել,
որ նրա մէջ չէ եղել և չը կայ մի սիս-
տեմատիկ և կան ընթացք, չը կայ մի
որոշ ձգտում հայերէնի վերածելու գրաւոր-
նութեան մի կամ միւս ձևի վերաբերեալ
նշանաւոր գրողները, չեն եղել և չը
կան մի որ և է հարցի վերաբերեալ այն-
քան թարգմանութիւններ, որ հայերէն
լեզուով կարողացողները կարող լինեն ա-
ռանց օտար լեզուների դիմելու՝ ծանօթա-
նալ մի նոյն իսկ ամենապարզ հարցի հետ՝
հայոց գրականութեան միջոցով հայերէն
լեզուով:

Եւ այդպիսով մեր թարգմանական գրա-
կանութեան մէջ կարելի է ասել համա-
մէն բան կայ, համա էլ ոչինչ չը կայ, ո-
րովհետեւ ամեն բանից քիչ-քիչ կայ իսկ
ամբողջութիւնը.—ոչ: Մենք ունենք թարգ-
մանած Եփեսոսի, Շիլլերի, Վիկտոր Հի-

գոյի, Լեսսինգի, Գեթեի, Սերվանտեսի,
Վալտեր Սկոտի և ուրիշ եւրոպական նը-
շանաւոր գրողների ստեղծագործութիւննե-
րից մի քանիսը, մենք ունենք զանազան
թարգմանութիւններ պատմական, մանկա-
վարական, քննական, կրօնական, և նոյն
իսկ քաղաքական ու գիտական բովանդա-
կութեամբ, նոյնպէս և բազմաթիւ լաւ թէ
վատ վէպեր և վէպիկներ,—մի խօսքով գը-
րականութեան ամեն ձևերի վերաբերեալ
նմուշներ,—բայց չունենք եւրոպական և
ոչ մի հեղինակի գրուածների ամբողջ ժո-
ղովածուի թարգմանութիւնը, չունենք գը-
րականութեան մի որ և է ձիւղի վերաբե-
րեալ այնքան թարգմանութիւններ, որ նը-
րանք մի ամբողջութիւն, մի ամբողջ, մի
լրացած բան լինէին, և կարողանային գա-
ղափար տալ, թէ ինչ գրութեան մէջ է, և
որքան հասունացած է եւրոպական ազգե-
րի մէջ որ և է հարց, լինի դա մանկա-
վարական, տնտեսագիտական թէ գրա-
կան:

Մենք մի քանի ապացոյցներ կը բերենք
Ամեն մի կարգով գրել խմացող հայ պար-
ծանքով է յիշում Եփեսոսի անունը. մեր
գրականութիւնը անհրաժեշտ է համա-
րում Եփեսոսի թարգմանութիւններն ու-
նենալ,—բայց մենք մինչև այսօր էլ Եփե-
սոսի գրողների նոյն իսկ մի քանորդը
չունենք հայերէն լեզուով. նոյնը կարելի է
ասել Շիլլերի, Գեթեի, Վիկտոր Հիւգոյի
մասին. էլ չենք խօսում եւրոպական աւելի
նոր ժամանակակից հռչակաւոր գրողների
մասին, որոնց գրուածքներից հայոց գրա-
կանութեան մէջ նմուշներ էլ չը կան:

Մի ուրիշ օրինակ. վաղուց է արդէն, որ
հայոց վարդապետ ասպարիզում աշխա-
տում են հստակ եւրոպական յայտնի ման-
կավարժները. ուղղութեանը, և ամեն մի
հայ վարժապետ շատ է սիրում յիշել Հեր-
բարտի, Կիսսերմիլի, Պետալոյի և ուրիշ

մանկավարժական հսկանքի անունները.
բայց ում չէ յայտնի, որ դրանց աշխատու-
թիւններից և յայտնած մտքերից շատ քի-
չերն են մտել հայոց գրականութեան մէջ,
և հայոց մանկավարժական ասպարիզում
գործողներից շատ քչերը գիտեն թէ ինչ է
ասում Հերբարտ, և ինչ մանկավարժական
գրուածքներ ունեն նոյն իսկ ամենայայտնի
մանկավարժները:

Կրկին մի օրինակ. վաղուց է արդէն, որ
մեր մամուլի և գրականութեան մէջ ամեն
օր անդադար խօսվում է տնտեսական
զանազան խնդիրների մասին, արծարծվում
են ժողովրդի տնտեսագիտական զարգացման
և տնտեսական բարելաւութեան հարցե-
րը.—բայց մինչև այժմ էլ հայոց լեզուով
լոյս չը տեսաւ գէթ մի հատ տնտեսագի-
տական գրուածք, եւրոպական նշանաւոր
տնտեսագէտներից գէթ միի թարգմանու-
թիւնը, որոնց միջոցով հայ ընթերցողը մի
հեռաւոր գաղափար կարողանար կազմել այն
մասին, թէ տնտեսական ի՞նչ մտքեր, ի՞նչ
ուղղութիւններ և ի՞նչ վարդապետութիւն-
ներ են բարդվում օտար գրականութիւն-
ների մէջ:

Թարուցանվում է կանանց հարցը, ար-
ծարծվում է կանանց ուսման և աշխա-
տանքի խնդիրը, մէկը միւսի յետեւից նոր
խնդիրներ են ծագում, բայց մեր թարգ-
մանական գրականութիւնը անտարբեր
մնալով դէպի այդ խնդիրը, անտար-
բեր մնալով դէպի կինական նշանակու-
թիւն ունեցող հարցերը, և մի տեսակ
յամուռութեամբ մոռացութեան տալով այն
ամենը ինչ որ կարող է մեր գրականու-
թեան համար հարստութիւն կազմել, շա-
րունակում է կամ նոյն աղքատ գրութեան
մէջ մնալ, նոր թարգմանութիւններ չանե-
լով, և կամ օտար գրականութիւններից
այնպիսի աշխատութիւններ է փոխ առ-
նում, որոնք մի առանձին արժէք չունե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

VIII

Իմ անցեալ թղթակցութեանս մէջ եւս ասեցի
որ համաշխարհային ցուցահանդիսի ժամանակ
շարունակվում են տեղի ունենալ Պարիզում ա-
մեն տեսակ կոնգրէսներ:

Խաղաղութեան կոնգրէսի նիստերը վերջացան,
թէն, պէտք է խոստովանվենք, որոշ և գրական
վճիռներ չը կայացրեց այդ կոնգրէսը: Բացի այն
տեսակ նշանաւոր անուններից, ինչպէս Ֆրեդե-
րիկ Պաստի, Ժիւլ Միման, Ֆրանկ, Դէստորմ և
այլն, մասնակցում էին այդ կոնգրէսին բազմա-
թիւ նշանաւոր ներկայացուցիչներ Անգլիայից,
Դանիայից, Իտալիայից, Գերմանիայից, Սլաւոնիա-
յից: Կոնգրէսին մասնակցում էին և ամերիկացիք
և նրանց թուում Ամերիկայի գեաւապետ Ֆրանսիս-
յում: Կոնգրէսի նիստերի ժամանակ եւս անձամբ
ծանօթացայ Հիւդոլֆ Դէստորմի հետ, որը խմբա-
գրում է «L'Unité Humaine» (Մարդկային Մի-
ութիւն) անունով լրագիրը:

Հետաքրքիր կոնգրէսներից մէկն էր և «Կա-
նանց իրաւունքների» կոնգրէսը: Այդ կոնգրէսում
տղամարդիկ և կանայք հաւաստարարեցին մասնակ-
ցում էին և մի քանի նիստերում նոյն իսկ կա-
նայք էին նախագահում: Այդ կոնգրէսի նիստերի
ժամանակ կանայք ապացուցին, որ գիտեն խօ-
սել, գիտեն լուրջ կերպով վիճարկել, հարցեր
առաջարկել, զեկուցումներ անել, նախագահել և
վերջապէս որոշ և զգալիանապէս ձեռնարկված
վճիռներ կայացնել: Կոնգրէսի կայացրած վճիռ-
ների, կամ աւելի լաւ է ասել արտայայտած
տենչանքն և իր թուում՝ ամենանշանաւորները

հետեւեալներն են: Կանանց վերաբերմամբ ֆրան-
սիական ամբողջ օրէնսդրութիւնը պէտք է վե-
րաքննվի. կանայք պէտք է իրաւունք ունենան
ազգայնական պաշտօնը կատարելու. օրէնսդրու-
թիւնը չը պէտք է արգելէ անհարգատ և քի-
տալ ծնող կնոջը ապացուցանել ու է եղել երե-
խայի հայրը. իւրաքանչիւր գաւառում պէտք է
հաստատվեն կանանց համար ապաստարաններ և
բարեգործական հիմնարկութիւններ, որոնք պէտք
է կառավարվեն կանանց ձեռքով. իւրաքանչիւր
գաւառում պէտք է հիմնվեն աշխատանքի իրա-
կան ապաստարաններ. ծծմարները մատակարա-
րող հաստատութիւններում բժշկական պէտք
է պաշտօնապէս վերահսկողութեան իրաւունք
ունենան. իրական սեռի ուսումը պէտք է ան-
պատճառ դպրոցներում կատարվի և ոչ թէ մաս-
նաւոր արհեստանոցներում. դասատու կանանց
ռոճիկ չափը պէտք է հաւասար լինի դասատու
տղամարդկանց ռոճիկ չափին. կանանց պէտք է
մատչելի լինեն բոլոր հասարակական ազատ պա-
րագլուխները:

Բայց առ այժմ բաւական է կոնգրէսների մա-
սին: Դեռ այս րօպէսի շարունակվում են բազ-
մաթիւ կոնգրէսներ Պարիզի ալ և այլ թաղերի
դահլիճներում, որոնցից մի քանիսն են խիստ հե-
տաքրքրական են: Գուլիեր 12-ից (նոր տոմարով)
բազմաթիւ է, դարձեալ Ժիւլ Միմանի նախագահու-
թեամբ, «Գաղական գործունէութեան և իրական
հաստատութիւնների» կոնգրէսը: Այդ կոնգրէսի
երեք փոխ-նախագահները կանայք են՝ Թիլլի-
Կեօլլին-Շվարց, Թիլլի-Բոժըլ և Թիլլի-Վէնշլլ:
Յոյս ունեմ մասնակցել նոյնպէս և այդ կոնգ-
րէսին, մասնաւորապէս որ այդ կոնգրէսում կը քննվի
և իրական արհեստաւորաց դպրոցների խնդիրը:
Եթէ կոնգրէսին մասնակցելու. գիտաւորութիւնս
աջողվի, եւ կաշխատեմ իր ժամանակին զրա-
ւորիւնների մասին տեղեկութիւններ հաղորդել
(Մշակի) ընթերցողներին:

Վերադառնալով, ուրեմն, նորից ցուցահանդիսի
նկարագրութեանը:

Պարիզի այս տարվայ համաշխարհային ցուցա-
հանդէսը այն աստիճան անաղին է, այն աստի-
ճան հրեշտակ է, որ եթէ մարդը նրան ոչ թէ մի
ամիս չարժանալ, այլ, վստահ կարող եմ ասել,
մի տարի չարժանալ ամեն Աստուծոյ օր այցելել,
դարձեալ շատ բաներ չի տեսնի, չի նկատի,
շատ բան, նոյն իսկ ամբողջ բաժիններ կը վրե-
պեն նրա աչքից: Այսպէս էլ պատահել է ինձ
հետ: Մի անգամ միայն այցելելով «Quai d'Orsay»
գեոեգրում գեոեգրված ցուցահանդիսի անաղին
մասը, և նրա առիթով անցեալ անգամ մի կար-
ծաւօտ թղթակցութիւն (Մշակին) գրած լինելով
—եւս մտաւայայ իմ թղթակցութեանս մէջ յիշել
սն ու զի առաւրկան երկ ալ և այլ երկեր-
ների ներկայացրած բաժինների թուում՝ անգլիա-
կան և հոլանդական շրաշալի բաժինները: Ան-
տարակոյս մտնողի առաւրկանները (կամ մտնողի
նիւթերը) ֆրանսիական բաժինը՝ ամենահարուստ
և ամենահարաշալին է, բայց և անվիճելի է որ
անգլիական նոյնանման բաժինը, (նրա մէջ ամ-
փոփելով և անգլիական իւրօրինակները), ֆրան-
սիական բաժինը յետոյ, առաջին տեղին է բըռ-
նում, թէ իր հարստութեամբ, թէ իր արդիւնք-
ների բազմաթիւութեամբ ու նրանց ներդրու-
թեամբ: Հրաշալի է անգլիական ժառանգ հաց և
այլ և այլ խմորեղէն խմոր շոգեշաքի ընդարձակ
պալիլիւնը. ձեր աչքի առջև բաղադրեալ շոգե-
շաքի մեքենայի օգնութեամբ՝ բազմաթիւ աշխա-
տաւորներ կայծակի արագութեամբ հունցում են
խմորը, հաց ու խմորեղէններ են թխում, և ան-
միջապէս առաջարկում են այցելուներին այդ
համեղ հացեղէններն ու խմորեղէնները: Գրեթէ
նոյնանման հաստատութիւն ունի և հոլանդական
բաժինը: Հրաշալի են նմանապէս հոլանդական
բաժին՝ կաթնեղէնն ու պանիրը. այդ բաժնի
պալիլիւններից մէկում դուք տեսնում էք հան-

դէս դրված հոլանդական մի քանի կաթնաւոր
կովեր, իրանց հորթերով Անգլիական բաժնի
գաղթականութիւնների արդիւնքներն էլ հիաց-
նում են այցելուին իրանց հարստութեամբ և
բազմաթիւութեամբ:

Եթէ «Quai d'Orsay» գեոեգրի ցուցահանդէսը
այցելուից յետոյ, եւս տուն վերադառնալ, թէն
հիացած, բայց մի և նոյն ժամանակ յոգնած,
ջարդված: Իսկ այսօր, առաւօտեան 8 ժամին եւս
դարձեալ ցուցահանդիսում էի, իսկ 9 ժամին
արդէն բարձրանում էի էյֆէլի եւս աշտարա-
կի վրա...

Իմ ծանօթներից մէկը (որը ինքն ֆրանսիացի
չէ) պատմում էր ինձ, որ երբ որ բարձրացաւ
էյֆէլեան աշտարակի վրա, այն աստիճան ողե-
ւորվեց, որ վերցնելով իր գլխարկը, սկսեց ծա-
ծանել նրան օդի մէջ, աղաղակելով «vive Eiffel»
(կեցցէ էյֆէլ): Նրա կողքին կանգնած ֆրանսիա-
ցիք զարմացած նայում էին նրա վրա, իսկ ծա-
նօթս դիմելով նրանց ասեց. «Մի գարմանաք,
պարոններ, եւս այնքան հիացած եմ, որ այս րօ-
պէսի ինձ աւելի ֆրանսիացի եմ դուռն, քան
թէ իրանք ֆրանսիացիք»:

էյֆէլեան աշտարակի վրա բարձրանալու ժա-
մանակ ինձ հետ էլ գրեթէ նոյնն էր պատահե-
լ: Թէն եւս չը վերցրի գլխարկս ու չը սկսեցի գո-
ւալ «կեցցէ էյֆէլ», բայց խոստովանվում եմ՝
իմ հիացման, իմ ողորութեան չափ ու սահման
չը կարի եւ կարծեմ էյֆէլեան աշտարակի վրա
իւրաքանչիւր համարածողին նոյնանման զգաց-
մունք է տիրում...

Հեռուից էյֆէլեան աշտարակը երևում է մի
թիւթի, չորսալի, իր թէ երկաթեայ թիւթից
հիւսված թափանցիկ շինութիւն: Բայց երբ որ
զուր մօտենում էք այդ շինութեան, մտնում էք
նրա հօր կամարների տակ, դուք սարսափում
էք. մի տեսակ սարսուռ, ճնշող զգացմունք է
տիրում ձեզ այդ հսկայ, հօր, անաղին, պինդ,

նալով հանդերձ՝ ապացուցանում են մեր վերջնականորեն միտքը, թէ մեր թարգմանական գրականութեան մէջ մի սիւսաւ մատակարար և նախամտածած ընթացք և որոշ պրոգրամ չը կայ:

Իսկ թէ ինչպէս պէտք է բացատրել այդ երևոյթը.—այդ մասին մենք կաշխատենք առանձին խօսել:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՄԱՐԱԿԻ ԱՌԵՏՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Արդէն շատ անգամ առիթ է եղել այն միտքը յայտնելու, որ տեղական վաճառականները իրանց այժմեան հանգամանքներով անկարող պիտի լինեն մրցելու օտար ֆիրմաների ներկայացուցիչների հետ, որոնք Երևանում սկսել են պարագլխի բամբակի առևտուրով, և որոնք տարուց տարի աւելի բազմանում, աւելի զօրանում են: Եւ այժմ երբ դեռ ևս իր որոշ տարին է, ինչ որ այդ ֆիրմաները սկսել են այստեղ գործել, երբ նրանցից շատերը դեռ հիմնաւոր կերպով չեն սկսել իրանց առևտրական դործունէութիւնը, բայց և այնպէս նրանք արդէն յաղթութիւնը տանում են և ամբողջ մի նահանգի առևտրի շրջանառութիւնը իրանց ձեռքն են առել, այդ էլ դեռ գործի սկզբում: Արեւմտ ինչ է պատճառում մեր առևտրականներին և դրամատէրերին անպայման, քանի որ բացի այժմ գործող վեց ֆիրմաներից, կը գան և շատ ուրիշներ, որոնք իրանց միջոցներով Երևանի և Երևանեան նահանգի առևտրի ամբողջ շրջանառութիւնը իրանց ձանկերի մէջ կառնեն: Շատ ցաւալի է, ճշմարիտ, որ տեղացիները իրանց երկրի բերքերը արտահանել չեն կարողանում, որ օտարի ներկայութիւնից տեղական առևտրականները այդպէս չուտով յետ են թաշվում, առևտուրը օտարին յանձնելով:

Այդ միտքը ապացուցանելու համար մենք առաջ կը բերենք մի քանի փաստեր և թւանշաններ բամբակի քանակութեան մասին, այլ և այն մասին, թէ իւրաքանչիւր ֆիրման այս տարի որքան բամբակ է գնել և որքան բամբակ էր գրել վում առաջ:

Նախ յայտնի ֆիրմաների մասին. 1) Պաշտանսի գնել է 12,000 հակ, դեռ չարուհանում է գնել: 2) Ալէկսեւ—4,000 հակ: 3) Կարգինկին—2,600 հակ (այս ֆիրմայի հակերը մեծ են, իւրաքանչիւրը հաւանոր է սովորական երկու հակի): 4) Ջիթախանց (Թիֆլիսից) 2,000 հակ:

հրէջ երկաթեայ շինութեան առջև: Որչափ, ուրեմն, աւելանում է այդ զգացմունքը, երբ ըսկում էք այդ հակայ շինութեան վրա բարձրանալ համարձեռնող մեքենայի (ascenseur) միջոցով: Համարձեռնող շողջարթ մեքենան, անասկի արագութեամբ, 5 թէ 6 րոպէում բարձրացնում է ձեզ գետնի մակերևոյթից մինչև մօտ 300 մէտր բարձրութիւնը: Մինչև աշտարակի առաջին յօրկը (պլատֆորմը), որտեղ շինված են թաղման ժառանգները, կաֆէներ ու բոտորաններ և որը 70 մէտր բարձրութիւն ունի գետնի մակերևոյթից, դուք վճարում էք ascenseur-ով բարձրանալու համար 2 ֆրանկ, առաջին յարկից մինչև երկրորդ յարկը, որտեղ գտնվում է «Figaro» լըբագրի ժամանակաւոր տպարանն ու խմբագրութիւնը և որը 105 մէտր բարձրութիւն ունի գետնից, դուք վճարում էք 1 ֆրանկ, և վերջապէս երկրորդ յարկից մինչև երրորդը, որը մօտ 300 մէտր բարձրութիւն ունի, դուք դարձեալ 2 ֆրանկ էք վճարում:

Ժամը 9 էր և արդէն աշտարակի կաստայի առջև բարձրանալու ցանկացողները անագին բազմութիւն էր կանգնած: Եւ վերջին տոմսակը, բարձրացայ սանդուղտներով մինչև համարձեռնող մեքենան և մտայ վազօնը, երբ հերթն հասաւ: Համարձեռնող մեքենան շինված է երկու յարկանի վազօնի պէս, որտեղ 80-ի չափ ճանապարհորդներ են տեղաւորվում մի անգամից: Այս շարժվել է վազօնը... Ներկայ գտնված մի քանի տիկիները գլուխը սկսում է շշմել... Անասելի աւրագունութեամբ մեր վազօնը գնում է դէպի վերև... Աշտարակի երկաթեայ հղոր սիւները մեր աչքի առջև կարծես շարժվում են, կարծես ամբողջ շինվածքը ներքև է գնում, արագութեամբ ցածանում է, իսկ մենք մեր վազօնով օդի ընդարձակ տարածութեան մէջ կախված ենք մնում... Հիացում, սարսափ, ոգիտութիւն, ճնշող զգացմունք

5) Գայեր—2,600 հակ: 6) Գրուշնդեր 300 հակ (այսքանը միայն նմուշի համար): Տեղացի վաճառականների առևտրի վերաբերեալ հետեւալ թւերը կան. 1) Դուզարեանցներ—1,000 հակ այս տարի, մինչև 4,000 հակ նախորդ տարիներում: 2) Գեորգեանցներ—600 հակ, նախորդ տարիներում մինչև 6,000 հակ: 3) Բեդլարեանցներ—500 հակ, նախորդ տարիներում մինչև 2,000 հակ: 4) Սարգսեանցներ—300 հակ, նախորդ տարիներում մինչև 2,000 հակ: 5) Հախնաղբառեանցներ—300 հակ, նախորդ տարիներում հազար հակից աւելի: 6) Աֆրիկեանց (երևանցի) 1,200 հակ, նախորդ տարիներում 2,000 հակ, և 7) մանր առևտրականներ—600 հակ:

Այդ թւերից երևում է, որ վեց ֆիրմաների գնած բամբակը միայն հասնում է մօտ 26,000 հակի, այն ինչ տեղացի վաճառականներին միայն միմիայն 4,500 հակ, այդպիսով այդ ֆիրմաները իրանց գործունէութեան խիստ կարճ միջոցում բամբակի առևտրի 86 պրօցէնտը իրանց ձեռքն առել, տեղացի բոլոր հանգամանքներին ծանօթ, տաննակ վաճառականների ձեռքում թողնելով միմիայն 14 պրօցէնտը:

Եւ միթէ ցաւելով չը պէտք է խօսել այդպիսի երևոյթի վրա, երբ օտարի յայտնվելով, տեղացիները հալածական լինելով թողնում են հրապարակը, առևտուրը և քաշվում մի անկիւն թէ բուն երևանցիները և թէ աղուկեցիներից նախորդ տարիներում մի քանի հազար հակներով բամբակ վաճառողներ կային, ինչպէս օրինակ, Արասխանեանցներ, Փանկանցներ, Մէլիքեանց, Խուզարաշեանցներ և շատ ուրիշներ: Մինչև անգամ այս վերջիններից մի քանիսը, որոնք քաղաքի մէջ իրանց կարողութեամբ մեծ տեղ են բռնում, թողնելով բամբակի առևտուրը այժմ յայտնի ֆիրմաներում միմիայն միջնորդի դեր են կատարում, դուզարուց գնելով և իւրաքանչիւր հակի համար մի որոշ վարձ ստանալով...

Մինչև այսօր մեր վաճառականներից արդեօք ո՞վ փորձեց Երևանից ոտքը դուրս գնել, գաւառներում բամբակ գնել մեծ քանակութեամբ, այն ինչ այժմ յայտնի ֆիրմաներից իւրաքանչիւրը իր գործակալատան ունի Սուրմալում, Ենիշայում, Շարուրում և Նախիջևանում: Արդեօք տեղացիներից մինչև այսօր ո՞վ մտածեց Պարսկաստան մտնել, այն ինչ այս տարի Պաշտանսից գալով, մասկատարը, հեռաւոր Ռուսաստանից գալով, մասկատարը սահմանները, խոլում և Սալմաստում մի քանի հազար հակ բամբակ գնեց: Մինչև այսօր տեղացիներից արդեօք ո՞վ մտածեց

և երկիւղ,—այդ բոլորը միախառնվում է մարդու սրտի մէջ... Վազօնի պատճառներից նայում էք դէպի ներքև և տեսնում էք ձեր չորս կողմ, աշտարակի երկաթեայ հիւստածքի միջով, մի անագին անդունդ, որտեղ ամեն առևտրականը հետդնեմ փորձարկում են և վերջապէս անհետանում են... Գուք մնում էք ձեր վազօնում օդի մէջ կախված՝ աշտարակի երկաթեայ սիւների և երկաթեայ թափանցիկ հիւստածքի մէջանդ... Կողմի վրա եղած առևտրականը հետդնեմ փորձարկում են ձեր աչքում, իսկ ձեր վազօնը դարձեալ և դարձեալ բարձրանում է...

Վերջապէս վազօնը կանգնեց, դուք դուրս էք դալիս պլատֆորմը... Պարկը իր շրջականերով երևում է ձեզ մի անագին դաշտ, որի վրա ամբողջ աշտարակի ստորոտում երևում են ձեր աչքին փորձիկ մրջնակներ...

Աշտարակի երկրորդ պլատֆորմի վրա եւս առաջ «Figaro» լրագրի երկվայ համարը, որպէս յիշատակ աշտարակի վրա համբարձման:

Բացի ascenseur-ից շինված են աշտարակի մէջ պտտվող երկաթեայ նեղ սանդուղտներ, որոնցով նոյնպէս կարելի է բարձրանալ մինչև վերև. բայց բարձրանալու այդ ձևը, ասում են շատ յոգնեցուցիչ է և բացի սրանից զլին պտտողներին ենթակայ մարդը անկարող է դիմանալ շինութեան թափանցիկ երկաթեայ հիւստածքի միջով իր ստիների տակ հետդնեմ բացվող խոր անդունդի տեսարանին...

Աշտարակի բոլոր պլատֆորմները շատ զեղեցիկ և յարմար կերպով շինված են. յատկաւ ասֆալտով է ծածկված, պլատֆորմների չորս կողմը շինված են պտտող մեքենաներ: Առաջին պլատֆորմը մի ամբողջ քաղաք է. այդտեղ կան բոլոր ֆէտներ, բոտորաններ, կաֆէներ, մազալիններ, որտեղ ծախվում են այլ և այլ իրերդներ, մանա-

բամբակ մարքելու մեքենաներ բերել և հիմնել գաւառներում, այն ինչ այժմ ֆիրմաներից երեքը, Ալէկսեւի, Կարգինկին և Պաշտանսի մի քանի տեղեր իւրաքանչիւրը հիմնած ունենալով մեքենաներ, աշխատում են սեփական հողեր ևս ձեռք բերել: Տեղացիներից մինչև այսօր ո՞վ մտածեց սեփական նպատակայարմար տներ և շինութիւններ ունենալ, մինչդեռ Կարգինկին լոկ տեղին միայն 15,000 ռ. փող վճարելով այսօր կառուցած ունի եւրոպական ճաշակով մի զեղեցիկ շինութիւն, որը քաղաքի առաջին շինութիւններից մէկն է: Եւ վերջապէս մինչև այդ ֆիրմաների մեզանում յայտնվել մերօրեցից ո՞վ մտածեց բամբակի լաւ վաճառիչ չուկել, տեսակները որոշակի կապել, ուղարկել, որ գոնէ Մօսկվայում վաճառելու ժամանակ շատ անկարգութիւններ առաջ չը գային հաշիւների մէջ, ինչպէս կատարվում է յաճախ. այն ինչ յայտնի ֆիրմաների շնորհով այսօր այդ բոլորը իրանց որոշ ուղղութիւնն են ստացել և բամբակը մի քանի տեսակի դարձնելով, դուրացնում են վաճառելու:

Մի խօսքով տեղացիների մէջ առաջադիմութիւն չերեաց, նրանք չարունակում են ժառանգական, հին սովորութեամբ դործել և երբ մի օտարական ոտք է դնում մեր երկրի մէջ, տեղի առևտուրը ձեռքն առնելով աւելի խելացի միջոցներով, այդ առևտրից աւելի է օգտվում քան թէ բուն տեղացին, և երբ բանը բանից արդէն անցած է լինում, այն ժամանակ միայն մերօրեք բացակայում են: Ինչպէս մենք այդ բանը չը մտածեցինք: Ժամանակ է, որ վերջապէս մեր վաճառականները իրանց գործունէութեան մէջ աւելի խելացի և աւելի հաստատ հաշիւներով և հայեցակէտերով զեկավարվեն, որպէս զի ապագայում միանգամայն ոտի տակ չընկնեն, և կու՛յ չը գնան զանազան ֆիրմաներից:

Բ. Տ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՆՈՅ

Յօդուի 2-ին

Երէկ երեկոյեան սիրողների խումբը ներկայացրեց յօգուտ Շուշու հայոց Բարեգործական ընկերութեան «Էլի մէկ գոհ» և «Գալու Ղազար» Շուշու կատարեալ երկնային պատիժ է մի շատ թէ թիւ լաւ պիւստ ներկայացնելու գործը, որովհետեւ, չը նայած որ մեր օրհնված քաղաքում անթիւ օրիորդներ և տիկիներ կան, պարերի, սուրճիների, «սիլի-բիլիների» և չաղ-չաղ բամբակներից սիրահար շատ ու շատ քնքշոյ աւրածներ, բայց դրանցից ոչ ոք չէ ուղարկ մօ-

ւանդ այնպիսի առարկաներ, որոնց կարելի է առնել որպէս յիշատակ Էլիէկեան աշտարակի մասին:

Աշտարակի ամենաբարձր կէտն այցելելու համարակութեան համար արգելված է. այնտեղ հաստատված է օդերևութեան կայարան և աստղաբաշխական դիտանոց: Անում են որ ուսումնական դիտողները, «սիլի-բիլիների» և չաղ-չաղ բամբակներից արդէն շատ աչող հետաքննողներ են տուել գիտութեան:

Էլիէկեան աշտարակը մի սովորական ճարտարապետական շինութեան չէ, այլ տեխնիկական հարուստ, հանճարեղ կոնցեպցիայի արդիւնք է, տեխնիկական հարուստ, ինքնուրույն ըմբռնման հանճարեղ ստեղծագործութիւն է: Եթէ այսօրվայ ամբողջ ցուցահանդէսը աւելի աղքատ, աւելի անաչող լինէր, քան թէ նա է իրականութեան մէջ,—Էլիէկեան աշտարակը միայն բաւական կը լինէր այդ ցուցահանդէսը ամբողջ աշխարհի երեսին հաշակելու և նշանաւոր դարձնելու համար... Այդ է պատճառը, որ ներկայ ցուցահանդէսը իր ամբողջ գոյութեամբ կապված է Էլիէկեան աշտարակի մօրը: և գոյութեան հետ Յուզահանդիսի բոլոր հրաշալիքներից առաջին հրաշալիքը այդ աշտարակն է և դարմանալի չէ, որ այդ աշտարակը այդքան ժողովրդականութիւն է ստացել ֆրանսիացիների բոլոր դասակարգերի մէջ և գրաւում է դէպի իրան հեռաւոր երկրների օտարագիր անթիւ. այցելողներին: Էլիէկեան աշտարակը ներկայ ցուցահանդիսի մի տեսակ նշանաւորն է դարձել... Իւրաքանչիւր բայալովիւնում կը տեսնէք նրա պատկերը, նրա նկարագիրը... Անթիւ և բազմատեսակ առարկաներ, որոնք ծախվում են Պարկի բոլոր անկիւններում: Կրում են Էլիէկեան աշտարակի պատկերը... քուշներ, չապիկ կոճակներ, կորիչներ, կանանց և մարդկանց զլխարկներ, մանուկ-

տեսալ բնմիւն: Հասարակական պայծառ ու փայլուն կարծիքն է, որ բնմը, թատերգութիւնը (անուն կոտորոյ), պատիւ վայր զգող բաներ են, որոնցից ինքն Ալլահը հեռու պահէ մանաւանդ լատինից դուրս անելու, այսինքն մարդու տալու աղիկներին, նրանց, որոնք պիտի «օղլու-ուշադ», (տեսնեցի) դառնան: Հասարակական այս փառաւոր կարծիքը շատ և շատ լաւ են գնահատում գաւառական խելքի ու մաքի ներկայացուցիչները: Այդ պարոնները, ինչպէս Գալու Ղազար է ասում, «միտք պահելու համար Ռուսէթ գնացածներ են», մեծ մեղք կը համարեն թատրոնի ազնիւ նպատակը և կրթող նշանակութիւնը գէթ մի րօպէ ուրանալ, բայց երբ «տեք երիտասարդներից մէկը» կը դիմէ նրանց խնդրելով թողաւութիւնը, որ նրանց քոյրը կամ «տեսնեցի» մասնակցեն ներկայացման, հինգ ամիս չի մոռանալ այդ պարոնների թիւ ու սառն, յուսահատ դէմքը: Կանացի դերերը խելքում են մեր գաւառական թատրոնները: Եթէ մեր գրամատուրգ պ. Սունդուկեան տեսնէր, իմանար թէ գաւառներում ինչպէս են չարչարում, յուսահատեցնում նրա պիւստների մէջ դուրս բերած բազմաթիւ կանանց դէմքերը, հաւատացած ենք, կը խղճալ խելք թատրոնաւորներին և կը գրէր յատկապէս գաւառների համար մի այնպիսի պիւստ, որ չունենար կանանց դեր: Ինչ անես. տաղանդաւոր հեղինակի գրութիւնները անթիւ անգամ բնմ են դուրս եկել իրանց գէշ-գրող հերոսներով, բայց մենք կարծի ենք և կարծում ենք թէ մեր մթնշուղթերի և այդ բնմի մէջ ոչինչ կապ չը կայ. վարապոյր է, բացվում է ու ընկնում, ներկայացնում են, իսկ մենք երեսներով պէս ծիծաղում ենք, նստած մեր Սարգիսների, մեր Սայմէնների, Արտիկների հետ: Հէնց այս վերջին փողի հերոսներն են, որ չեն թողնում կնոջը դուրս գալ բնմ, ներկայացնել իր ողորմելի դրութիւնը, որովհետեւ կնոջ այդ տեսակ հրապարակական խոստովանութիւնը մեր ժողովրդական փիլիսոփաները միանգամից անբարոյականութիւն են անուանել: Եւ գաւառական բնմերի մատչելի են մնացել «Ալլալի Բ-ի», «Սամէլի» պէս պատմական պիւստները, որոնք այժմ պատմական ճանճրութեան և անմտութեան միտք են ներկայացնում: Հալաւակի պէս այժմ էլ չէ ընդունվում հին ամենաբարձր ժամանակների սովորութիւնը, այժմ այլ ևս Շուշանիի դերը չէ կարող կատարել մի որ և է տիրացու Մարկուս: Այժմ պահանջվում են ժամանակակից կեանքից վերցրած պիւստներ, դրանք էլ առանց կնոջ չեն լինում: Ապա ինչպէս չը յուսահատվոյ:

Ների զգեստներ, պորտ-սիգարներ,—ամեն բան կրում է իր վրա Էլիէկեան աշտարակի պատկերը... Քաղցրեղենների խանութներում դուք կը տեսնէք շաքարից շինված Էլիէկեան աշտարակը, ֆրանտ տղամարդկանց ձեռագայտերի վրա և շքեղ հագնված կանանց զլխարկների վրա կը տեսնէք նոյնպէս Էլիէկեան աշտարակի պատկերը կամ ձեռք... Ամեն տեղ Էլիէկեան աշտարակը...

Գրական կոնգրէսի անգամներին «Hotel Continental» փառաւոր հիւրանոցում տուած ճաշկերպով ժամանակ Ժիւլ Սիմօն իր արտասանած գեղեցիկ ճառը վերջացրեց հետեւալ խօսքերով. «Rappelez vous, Messieurs, que nous sommes tous citoyens de la tour Eiffel» (Ինչեղբ, պարոններ, որ մենք ամենքս Էլիէկեան աշտարակի քաղաքացիներ ենք):

Եւ ինքն Էլիէկ ինժեները մի անփորձ մարդ չէ այդ տեսակ շինութիւնների կառուցանելու: Առաջին անգամ չէ, որ այդ տաղանդաւոր մարդը կառուցանում է մի աչքի ընկնող շինութեան հրապարակական աշխատանքների ֆրանսիական միջնորդութեան ցուցահանդիսի բաժնում հանդէս է դրված Էլիէկ: Զեռքով մի քանի տարի առաջ կառուցված մի հրաշալի երկաթեայ կատարակ ժողովը. դա ֆրանսիական Օմէրն գաւառում շինված երկաթեայ հրաշալի կամուրջն է: Իշխելով Էլիէկեան աշտարակից դառնեց Տրօկադրօ: Կապարական այդպիսի Գիտաւորութիւն ունեւ այսօր այցելել ցուցահանդիսի Տրօկադրօի մասը և նմանապէս մտնել Տրօկադրօի կոնցէրտային դահլիճը, որտեղ Ֆրիւանդիայից եկած ուսանողների երգեցիկ խումբը այսօր իր առաջին կոնցէրտն է տալիս:

Գրիգոր Արծրունի

Լորդ Սալզբորի կը մերժէ ունէ պատասխանատուութիւն այն դէպքերի նկատմամբ որ կը կարծուի թէ տեղի ունեցեր են Արմէնիայի մէջ. բայց կընդունի թէ Անգլիայի պարտաւորութիւնն է ամեն տեղ որ որ կրնայ, բարեկամել քրիստոնեայնեան վիճակը: Կը կարծէ թէ պատմութեամբ գէշութիւնները չարապահացում են և Բ. Գուռը սուտ կը հանէ զանոնք: Այսու ամենայնիւ չէ կարելի ուրանալ Արմէնիայի մէջ տեղող անկարգութիւնը և լեռնականների ըրած արշուանքները: Կարելի է պարտաւել թիւրքիւն որ այդ անկարգութիւնները ծննդու համար աղղու միջոցներ չը գործածեն. բայց պէտք է յիշել որ թիւրքիւն անկար է և աղքատ:

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կորուրդեան պրինցը, ինչպէս գրում են Վիեննայից, բանակցութիւններ է սկսել Վիեննայի և Հռոմի հետ Բազալիայի կառարկա անկախութեան վերաբերեալ հարցերի մասին:

—Վիեննայում լուր է տարածված, որ անգլիական կառավարութիւնը զալ տարի մարտ ամսին պէտք է բոլորովին յետ կանչի իր զորքերը Եգիպտոսից:

—Գերմանական կառավարութիւնը, ինչպէս գրում են Բերլինից, ամենախիստ կ'օնտրօլ է նշանակել իր չվեյցարական սահմանազիւր վրա:

—Մարսելից, յունիսի 29-ից մի ցաւալի դէպքի մասին հեռագրում են. «Այստեղ եկած «Caledonie» նաւի ճանապարհորդների մէջ խօսքայի հիւանդութեան երեք դէպք եղաւ: Նաւը ենթարկվեցաւ օդամաքութեան»:

—Կ. Պոլսից անդադար լուրեր են գալիս, որ թիւրքիւն զօրք է կենտրոնացնում սերբիական սահմաններում և Բոսնիայի մօտերում: Անկախ կամ այդ հանգամանքը առաջ կը բերի հարցապնդում աւստրիական կառավարութեան կողմից:

—Ընդունից գրում են, որ հողային հարցի պատճառով իրանդիւրում կրկին սկսել են շարժման նշաններ երևալ:

—Անգլիական համայնքների ժողովի վերջին նիստերից մէկում հաղորդված տեղեկութիւններից երևում է, որ վերջին ժամանակներս Եգիպտոս մտած դրվիշների թիւը 6.000-ից աւելի է:

ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքաց Հայաստանի Տիգրանակերտ քաղաքից արտասահմանի հայոց մի լրագրի գրում են հետևեալ գործերի տողերը: Այս օրերս Տիգրանակերտ անձրև և չը գալու է համար, քանի մը մեռած հրէաների զուլաներ թէ և կտրեցին, նորէն օգուտ չըրաւ: Ապա թաղումը խեղճ հայու մը գերեզմանը փորելով, դուրսը կտրեցին թիւրքերն և Տիգրան Գեորգի մէջ ձգեցին, բայց նորէն անձրև չեկաւ:

Գնեհալ Բուլանձէի այս օրերս ստացած նամակների և ծրարների թուում գտնվում էր և Ֆրանսիայից ստացված մի արձագանք արկղի Գնեհալը համոզված էր, որ այդ իր «բաղմամբ» երկրպագուներից մինի ընծան է: Սակայն արկղը բանալով, գնեհալը միանգամայն համոզվեց, որ ինքն սխալվել է իր ենթադրութիւնների մէջ. արկղում դրված էր մետաքսէ մի երկար թուղ, և հետեւեալ բովանդակութիւն ունեցող մի գրութիւն. «Ֆրանսիացիների մի խումբ, մի քանի տարի արեւելքում արած լինելով, ուղարկում է գնեհալ Բուլանձէին արեւելեան մի ընծայի նիւթ գնեհալը յիշատի սիրում է Ֆրանսիան և նորա բարորդութիւնն է ցանկանում, այն ժամանակ նա չի յայտադր օգուտ քաղել այդ ընծայից, և արեւելեան սովորութեամբ, մետաքսի այդ թուղի միջնորդութեամբ կը շտապի դնալ այն աշխարհը, ուր նա չի խախտի Ֆրանսիայի բաղձը...» Գնեհալը Բուլանձէի ի հարկէ, օգուտ չի քաղել իր հայրենակիցների այդ «սիրալիր» ընծայից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յուլիսի Հռոմի ռուսաց զինւորական գործակալ քարոս Բոլշն, իր այժմեան պաշտօնից հանդիմ է և մտքոված զլխաւոր շտաբի կառավարչի կարգադրութեան ներքոյ:

ՊԱՐԻԶ, 5 յուլիսի «Temps» լրագրի տեղեկութիւններն նայելով, Բուլանձէ մեղադրվում է և-

րեք բանում. այն է պետութեան ապահովութեան դէմ փորձեր անելու, դաւադրութիւն կազմելու և արեւելեան փողեր վառնելու մէջ: Մածկատառ հեռագրիները, որոնց կարգաւու գաղտնիքը նորերս իմացվեց, ապացուցանում են դաւադրութիւն անելու միտքը. «պատրաստութիւն էր տեսնված յարձակվելու Եւրասիան պալատի վրա, և Բուլանձէին սպառնում էր դրա հետեանքին. մի քանի բարձրաստիճան սպաներ Բուլանձէին խոտաղել էին իրանց աշակերտները: Արքունի փողեր վառնելու փաստը վերաբերում է արքունական կապալներին, ի միջի այլոց զօրքի համար սուրճ և զինւորական մահճակալներ մատակարարուն, բացի դրանից, ինչպէս «Temps» հաղորդում է, միջխտրական փողերը Բուլանձէի անձնական պէտքերի վրա գործածելու մասին: Այսօր թղթեր են ուղարկված Բուլանձէին, Գիլիսին և Բաշթօրին՝ բարձրագոյն ատեններն ներկայանալու համար, որը զուարթվում է օգոստոսի 10-ին:

ԲԵՐԼԻՆ, 5 յուլիսի «Hamb. Nachrichten» լրագրին ուղղած հեռագրում կոմս Վալդերից հերքում է այն լուրը, որ իբրեւ թէ ինքը ներկայացրել է մի գրութիւն Վիլհելմ կայսրին, որով խորհուրդ էր տալիս չուտով սրտեղծագործ սկսելու:

ԲԻՌՈՒՆԵՑՔՐ, 5 յուլիսի երէկ երեկոյան թատրոնից դուրս գալիս, Բրադիլիայի կայսրի վրա արձանակ արձակեցին: Կայսրը անմիապէս ցանցաւորը պորտուգալացի է:

ՊԱՐԻԶ, 5 յուլիսի Լագրի և Գերուլից ուղեւորութիւն լինգոն:

ՎԻԵՆՆԱ, 5 յուլիսի Հին գործադուները տարածվելով, վառնգաւոր կերպարանք ստացան:

ԼՈՆԴՈՆ, 5 յուլիսի «Times» լրագրին հեռագրում են Վիլհելմայի, որ Բ. Գուռը երեքշաբթեան զանալիցութեան քաղաքականութեան կողմը անցաւ: «Եգիպտոսից ստացած լուրերին նայելով, դեռեալ Գրենիլէ զրկվիշների առաջնորդին առաջարկութիւն արաւ անձնատուր լինելու, խոտաշնայով զբոլիշների ներքի և չը սպանել: Գերվիշների զլխաւորը հրամայեց զանակածել լրաբերին:

ԲԵՐԼԻՆ, 5 յուլիսի Ստամբուլից հերքում է այն լուրերը, որ իբր թէ Բազալիան մտադիր է աւելի օրոշ կերպով արտայայտել իր անկախութեան ձգտումները:

ՊԱՐԻԶ, 6 յուլիսի Կ. Պոլսից հաղորդում են, որ Վիլհելմ կայսրը, նախ քան Կ. Պոլսի ուղեւորվելը, պահանջեց Սուլթանից, որ նա խոտաշնայ Բերլին այցելել: Սուլթանը մերժեց ինքնագրում են, որ Վիլհելմ կայսրը մի պատրաստ էր փրկուում Կ. Պոլսի գնալուց ապառկելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յուլիսի երէկ պետական խորհրդի ընդհանուր ժողովում ընդունւմ էր բանապետների խնդրերը:

ԼՈՆԴՈՆ, 6 յուլիսի Եգիպտոս արշաւանք զործող մագդիականների առաջնորդը, անգլիական զինեակալից ստացած առաջարկութեանը անձնատուր լինել, արձամարանքով պատասխանեց և անգլիացիների անձնատուր լինելը պահանջեց:

ԲԵՐԼԻՆ, 6 յուլիսի Գերմանական կայսերական նաւը, հասնելով հիւսիսային հրաւանդանին Նորվիգիայում, յետ դարձաւ:

ՓԱՐԻԶ, 6 յուլիսի Սորբոնի ուսանողները հրաւերներ ուղարկեցին ամբողջ աշխարհի ուսանողներին՝ յօրեկանը տօնելու համար:

ՎԻԵՆՆԱ, 6 յուլիսի Նոր-ձիւնքը շարունակում են պնդել իրանց «Народные Листы» օրգանում, որ աւստրիական կայսրը իրանց վերաբերմամբ վիրաւորական կարծիք է յայտնել:

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ, Ե. Վ. Ձեր վերջին նամակը չի տպվել իսկ ձեր առաջին գրածը քանի որ ձեր նամակը չէր կարող տպվել հասկանալի պատճառով. «Թղթակցութեան մէջ փաստեր պէտք է լինեն, առանց անվերջանալի դատողութիւնների: Ամեն մարդ իրաւունք ունի իրան Ուսպենսկի կարծիք, բայց, հետաւանքը, որ մենք ոչինչ նմանութիւն չենք տեսնում Ուսպենսկու գրածներին և մի օր և է հոգաբարձուի Ֆրազների մէջ, որոնց առիթով դուք այնքան ոգեւորվել էք: Որտեղից որտեղ...»

ՇՈՒՇԻ, Գ. Շ. Մեղանից անկախ պատճառներով առհասարակ այդ մասին ոչինչ չենք կարող տպել:

ԿՅՐՍ, Ա. Պ. Ձեր կարող տպագրել: ԳՈՐԳՈՍ, Մ. Ձեր նամակը այդ ձևով տպելու պատճառը խնդրութիւնից դուրս է:

ԲԱԳՈՒ, Գ. Գ. Ձեր թարգմանութիւնները «Մշակի» մէջ չեն տպվել:

Ժամանակաւոր խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակել ԳԻՐԳՈՐ ԱՐԲՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԻՍԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

սրանով յայտնում է ամենքին, որ Ռուսաստանի երկաթուղիներից շատերը և Անդրկովկասեան երկաթուղին 50% քչացրել են կովկասեան ցուցահանդիսի համար բերվող նիւթերի (էկսպոնատ) և էկսպոնէն տներ ի տեղափոխութեան տարիները: Ռուսաց նաւազնացական և առեւտրի ընկերութիւնը, «կովկաս և Մերկուրի» նաւազնացական ընկերութիւնը, 50% պակասեցրել են էկսպոնատների տեղափոխութեան տարիքը. կասպից ծովի նաւազնացական «Դրուժինա» և «Մասիս» ընկերութիւնները և Անդրկասպեան երկաթուղին յանձն են առել կովկասեան ցուցահանդիսի էկսպոնատները ձեռքի տեղափոխել:

Տեղափոխութեան վերաբերեալ արտօնութիւնների մանրամասնութիւններին հետ ծանոթանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել թիֆլիս, կովկասեան ցուցահանդիսի կարգադրիչ մասնաժողովին. բոլոր կարեւոր տեղեկութիւնները ուղարկվում են անյապաղ և ձրիաբար:

1—1

ԲԺՇԿԱՊԵՏ Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (Թիֆլիսից) տեղափոխվելով Մանդլիս ամառանոցը, մինչև սեպտեմբեր ամիսը հիւանդներին ընդունում է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, Պրոսուգալովկա, տուն Վասիլ Գուտովի:

1—5

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի տաւրկայք սորա են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուարանութիւն համընթի վրա, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց: Մրազբիւր ու կանոնները կարելի է ստանալ ՁԻՄԱՊԵՍ եղբ. Մովսիսովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Ստարաքաղաքացի դիմում են կուրսերի հիմնովի. — вѣ Тифлисе, С. П. Мануэляну.

1—20 (Ե. Ե.)

Լոյս տեսաւ մամուլի տակից

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նոր ուխտի, աշխատասիրութիւն Սահակ քահանայ Սահակեանցի Ղինն է 35 կ. Նոյն անձի աշխատասիրութեամբ Լոյս են տեսել

- 1) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի, զինն է 30 կոպ.
- 2) ԴԱՍԱԳԻՐԻ ԿՐՕՆԻ հին-ուխտ, զինն է 1—75 կ.
- 3) ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻ հայ կրօնաւոյնների, զինն է 10 կոպ.

Դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը:

3—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԺՈՐ ՀԻՄՆԵԴԱՆՈՑ

Բ. ՆԱՌԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուրիա, Վ. օրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը

ՐՈՒԴԻՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. անկախ, կուրորդի, թիֆլիսի և սիֆիլիսի (փրկարու. և տոտաքաւի)
ԱՐՏԵՄԻԿՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5½—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էկկորոտերապիա):
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մահկաբարձուհիք՝ Երկանցեան և Արտազեան:
Վճար—50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փորագրած համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԻՎՈՎՍԿԻ

3—10

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

Առաջ չարահայտների համար

ԳԵՌԳ. ԲԱՐԵՊԱՇՏԱՆՑԻ:

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում:

Գինն է 60 կոպ.

3—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ բաւական ժամանակ պարպել է վաճառականութեամբ, ՑԱՆԿԱՆՈՒՄ է ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄՏՆԵԼ վաճառականի կամ կապալառուի մօտ. համաձայն է և քաղաքից դուրս ծառայելու հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրամանը:

4—4